**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9-3**

ք.Երևան «22»«06» 2026թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուրեն Ազատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 30.12.2025թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով Վաճառող կազմակերպության՝ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 19.06.2026թ.-ի թիվ 046/026 գրությունը՝ մատակարարման ժամկետի երկարաձգելու վերաբերյալ, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 2 հավելվածով՝ «Մատակարարման ժամանակացույց»-ով, թիվ 12-րդ չափաբաժնով նախատեսված 900 լրակազմ «Կիսաբրդյա բաճկոն և ազատող փողքերով տաբատ» և թիվ 13-րդ չափաբաժնով նախատեսված 300 հատ «Տոնական վերնաշապիկ» ապրանքատեսակների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով 30.06.2026թ.-ի փոխարեն, սահմանել մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2026թ.-ի հուլիսի 30-ը ներառյալ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9-3 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ ք. Երևան, Զ.Սարկավագի 157 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Արարատբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1510023294810100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00803554 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Տնօրեն՝ Ս.Ազատյան ____________ (ստորագրություն) Կ.Տ |